Կարգապահական գործ թիվ ԿԳ-17032

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 233-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/139-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ նաև Պալատ)** խորհուրդը՝ նախագահող փաստաբան Մելանյա Առուստամյանի, անդամներ՝ Կարեն Մեժլումյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Տարոն Սիմոնյանի, Նելլի Հարությունյանի, Կարապետ Աղաջանյանի, կազմով,

քարտուղարությամբ Պալատի կարգապահական գործերը համակարգող՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան՝ Վահագն Մանուկյանին (արտոնագիր 749) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և վարույթի նախապատմությունը</u>**

26.05.2017թ. Պալատում մուտքագրվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Արտակ Թադևոսյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 22.05.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում)**, որում նշվել է, որ թիվ ՇԴ3/0048/01/16 քրեական գործով նշանակված թվով 17 դատական նիստերից ամբաստանյալ Հայկ Համբարձումյանի պաշտպան Վահագն Մանուկյանը չի ներկայացել թվով 6 դատական նիստերի:

Դատարանը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը, 314.1-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը, նշել է, որ խորհրդակցական սենյակում քննության առնելով փաստաբան Վ.Մանուկյանի գործողությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ 2017թ. մայիսի 22-ին ժամը 16.00-ին նշանակված դատական նիստի օրվա և ժամի մասին լինելով նախապես պատշաճ ծանուցված, չի ներկայացել դատական նիստին՝ չներկայացնելով հարգելի պատճառներ, եկել է եզրահանգման, որ Վահագն Մանուկյանն ըստ էության իր դատավարական իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և անհարգելի չի կատարել իր դատավարական պարտականությունները՝ չարամտորեն խուսափելով դատարան ներկայանալուց, ինչով ձախողել է գործի քննությունը՝ դրանով իսկ

անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Դատարանը 22.05.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. *«ՇԴ3/0048/01/16 քրեական գործով ամբաստանյալ Հայկ Վահագնի Համբարձումյանի շահերի պաշտպան Վահագն Մանուկյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատ»*:

2.<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 21.06.2017թ. թիվ 166-Ա/ԿԳ-17032 որոշմամբ փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր թիվ 749) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1. ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

26.06.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նվեր Սարգսյանին:

3.<u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Դիմողը սույն կարգապահական գործի քննությանը չի ներկայացել՝ չնայած դրա ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբան Վահագն Մանուկյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն, սակայն կարգապահական վարույթի հարուցման փուլում նման բացատրություն փաստաբանի կողմից չի ներկայացվել:

Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել գործի նախապատրաստման և քննության ընթացքում:

Փաստաբանը սույն կարգապահական գործով հրավիրված նիստերին չի ներկայացել և Խորհրդին բացատրություն չի ներկայացրել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4.<u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

28.08.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որում հաստատված է համարել հետևյալ փաստերը.

- 30.03.2017 թ. չի ներկայացել դատարան վատառողջ լինելու պատճառով: Այդ օրը նիստը չի կայացել այլ երկու ամբաստանյալներին ուղեկցող դասակի կողմից դատարան չներկայացնելու պատճառով:

- Դատարանի կողմից սանկցիա կիրառելու որոշման մեջ անդրադարձ է կատարված միայն 22.05.2017թ. Վ. Մանուկյանի կողմից դատական նիստին չներկայանալու փաստին, որտեղ դատավորի օգնականի միջոցով փորձ է կատարվել ճշտել Վ. Մանուկյանի՝ դատարան չներկայանալու պատճառները, սակայն նրան հեռախոսի միջոցով չի հաջողվել կապնվել Վ.Մանուկյանին: Նույն օրը կայացվել է որոշում նրա նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու համար դիմել Պալատին:
- Դիմողի կողմից մնացած 5 օրերի բացակայության մասին չի ներկայացվել դատական նիստի արձանագրությունը, կամ այլ փաստ, որով կապացուցվեր Վ.Մանուկանի կողմից 2 կետում նշված նիստերից բացակայելու փաստը, իսկ 30.03.2017թ.չի ներկայացել դատարան վատառողջ լինելու պատճառով, որը դատարանը ընդունել է /դատալեքս համակարգ/:

Նախապատրաստողը հանգել է այն հետևության, որ դատարանի կողմից դատական սանկցիա կիրառելու մասին որոշումը կարող էր կայացվել միայն հաջորդ դատական նիստում՝ նշված դատական նիստում բացակայության պատճառը պարզելուց հետո, և նշել է, որ վերջնական որոշումը ենթակա է կայացման Խորհրդի կողմից:

31.08.2017թ.գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 2017 թվականի հոկտեմբերի 12-ին, ժամը՝ 19:00-ին և 2017 թվականի դեկտեմերի 21-ին, ժամը՝ 18:45-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Թիվ ՇԴ3/0048/01/16 քրեական գործով մեղադրյալ Հայկ Համբարձումյանի պաշտպան է հանդիսանում փաստաբան Վահագն Մանուկյանը:

Նշված փաստը հաստատվում է դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, «www.datalex.am» դատական տեղեկատվական կայքից հանված տեղեկատվությամբ.

- Թիվ ՇԴ3/0048/01/16 քրեական գործով 30.03.2017 թվականին հրավիրված դատական նիստը չի կայացել, քանի որ պաշտպան Վ.Մանուկյանը չի ներկայացել դատական նիստին վատառողջ լինելու պատճառով, ինչպես նաև ուղեկցող դասակի կողմից ամբաստանյալներ Գ.Ջանոյանը և Հ.Հարությունյանը չեն ներկայացվել դատարան:

Նշված փաստը հաստատվում է դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, «www.datalex.am» դատական տեղեկատվական կայքից հանված տեղեկատվությամբ.

- Թիվ ՇԴ3/0048/01/16 քրեական գործով նշանակված թվով 17 դատական նիստերից ամբաստանյալ Հայկ Համբարձումյանի պաշտպան Վահագն Մանուկյանը չի ներկայացել թվով 6 դատական նիստերի, մասնավորապես՝ 2017թ. մայիսի 22-ին ժամը 16.00-ին նշանակված դատական նիստին

Նշված փաստը հաստատվում է դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, «www.datalex.am» դատական տեղեկատվական կայքից հանված տեղեկատվությամբ։

6.<u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի 21.12.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Վահագն Մանուկյանը փաստաբանական գործունեության թիվ 749 արտոնագիրը ստացել է 19.10.2007թ, և 2007թ.-2017թ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 14 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (12 ավարտված վարույթ և 2 ընթացիկ): Համաձայն նշված տեղեկանքի հավելվածի՝ Պատասխանողի նկատմամբ 30.01.2017թ. թիվ ԿԳ/23-Ա որոշմամբ առկա է չմարված տույժ՝ տուգանք 50.000 ՀՀ դրամի չափով և իր հաշվին 8 ժամ ժամաքանակով վերապատրաստման դասընթացի մասնակցություն:

7.<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Մանուկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է. *«Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները .... 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը»:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ ***փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության***

մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով*:

դիմողը Որոշմամբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ թիվ ՇԴ3/0048/01/16 քրեական գործով 2017թ. մայիսի 22-ին ժամը 16.00-ին նշանակված դատական նիստի օրվա և ժամի մասին լինելով նախապես պատշաճ ծանուցված՝ չի ներկայացել դրան՝ չներկայացնելով հարգելի պատճառներ:

Դիմողը Որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Պատասխանողը թիվ ՇԴ3/0048/01/16 քրեական գործով 2017թ. մայիսի 22-ին ժամը 16.00-ին նշանակված դատական նիստի օրվա և ժամի մասին նախապես պատշաճ ծանուցված լինելով՝ չի ներկայացել դրան՝ չներկայացնելով հարգելի պատճառներ:

Ուստի, Պատասխանողի կողմից Կանոնագրքի 4.1 կետի խախտում թույլ տալու հանգամանքը պարզելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցադրմանը.

- Արդյո՞ք Պատասխանողը թիվ ՇԴ3/0048/01/16 քրեական գործով 2017թ. մայիսի 22-ին ժամը 16.00-ին նշանակված դատական նիստին չի ներկայացել առանց հարգելի պատճառի՝ դրանով իսկ անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի նկատմամբ:

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:*

Հիմք ընդունելով սույն կարգապահական գործում առկա փաստական տվյալները՝ Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ Դիմողի կողմից չեն ներկայացվել Դիմումում վկայակոչված՝ փաստաբան Վահագն Մանուկյանի վարքագծին վերագրվող բավարար ապացույցներ: Մասնավորապես, սույն կարգապահական գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ թիվ ՇԴ3/0048/01/16 քրեական գործով 2017թ. մայիսի 22-ին ժամը 16.00-ին նշանակված դատական նիստի օրվա և ժամի մասին Պատասխանողը եղել է պատշաճ ծանուցված, և չի ներկայացրել դատակաան նիստին չներկայանլու հարգելի պատճառներ: Դիմողի կողմից սույն կարգապահական գործի շրջանակներում վերոգրյալ հանգամանքը չի հիմնավորվել, մինչդեռ նշված փաստի ապացուցման պարտականությունը կրում էր հենց Դիմողը:

Ավելին, Պալատի աշխատակազմի ղեկավարի 18.10.2017 թվականի թիվ ԿԳ/603-17 գրությամբ Դիմողին առաջարկվել է ներկայացնել Որոշմամբ նշված հանգամանքները հիմնավորող փաստաթղթեր, այն է՝ փաստաբան Վահագն Մանուկյանի կողմից դատական նիստերի պատշաճ ծանուցումը ստանալու վերաբերյալ ապացույցներ, ինչպես նաև նրա կողմից դատարան չներկայանալու վերաբերյալ ներկայացված դիմումների պատճենները, սակայն նման փաստաթղթեր Խորհրդին չեն ներկայացվել:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը.*

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դիմողի կողմից սույն կարգապահական վարույթի ընթացքում այդպես էլ չհիմնավորվեց իր կողմից վկայակոչած հանգամանքները, ուստի տվյալ պայմաններում չի հիմնավորվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար, սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետով, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Պալատի կանոնադրությամբ, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 21.06.2017թ. թիվ 166-Ա/ԿԳ-17032 որոշմամբ՝ փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր 749) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան

21 դեկտեմբերի 2017թ.
թիվ ԿԳ/139-Ա
ք. Երևան